

Ս. Էջմիածին, Ս. Ծնունդ 1980

Նորին Ամենապատուութիւն

Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեան

Պատրիարք Երուսաղէմի Հայոց

Երուսաղէմ

Սիրելի Սրբազան Եղբայր,

Աստուած մեր, բարեաց պարգեւատու, մեզ վերսին կ'արժանացնէ ողջունելու Նոր Տարուան արեւոյտը, իր միածին Որդւոյն Սուրբ Ծննդեան աւետիսով:

Աւետիս մեծ եւ սմանչելի, բոլոր ազգերու եւ բոլոր ժամանակներու համար, զի ծնաւ Փրկիչը մեր Քրիստոս, ցոյց տալու համար համայն մարդկութեան՝ հանապարհը յաւիտեական կեանքին՝ երկնքի արեւոյտեան մէջ ու հանապարհը մարդոց խաղաղ համակեցութեան եւ փոխադարձ հանութեան՝ երկրի վրայ:

Մեր օրերու աշխարհի խռովայնոյզ կացութեանց առաջ կանգնած, մենք քրիստոնեաներս, զրահուած մեր հաւատքի լոյսով եւ Սուրբ Ծննդեան երկնային պատգամով, պարսինք անձանձոյթ աղօթել ու գործել, որ երկրի վրայ տեսալէս քաղաւորեն փոխադարձ բարի կամեցողութիւնը եւ խաղաղ գործակցութիւնը մարդոց եւ ազգութիւններու միջեւ:

Մեր յորդորն է նաեւ ուղղեալ մեր Մայր Եկեղեցիին ու համայն մեր հաւատացեալներուն, որ ապրին եւ գործեն սիրով միաբան, մէկը միւսին հնազանդ՝ երկիւղովը Քրիստոսի:

«Զի նա է խաղաղութիւն մեր՝ որ արար զերկոսեան մի եւ զմիջնորմն ցամկոյն իակեաց՝ զքրեմաժութիւն ի մարմնի իւրում» եւ «եկն աւետարանեաց խաղաղութիւն ձեզ, հեռաւորաց եւ խաղաղութիւն մերձաւորաց» (Եփես., Բ. 14 - 17):

Մեր սիրքը լեցուն Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի Սուրբ Ծննդեան ուրախութեամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն Զեղ Ամենապատուութեան եւ Սուրբ Աթոռիդ հոգեւոր դասուն եւ մեր հարազատ հաւատացեալ զաւակներուն կը բերենք Աստուծոյ օրհնութիւնը եւ Մեր հայրական սէրն ու ամենաբարի մաղթանքները բոլորիդ հոգեւէն առաքելութեան լիակատար յաջողութեան համար:

Զեղի մեծ աւետիս՝ «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Շնորհմ հրաշալի ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վ.Ա.ԶԳԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ